

Տ. ԱՂԱՆ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ ՂԱԼԻՈԶՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԽԱՉՎԵՐԱՅԻ ՏՈՆԻՆ

(16 սեպտեմբերի 2001 թ.)

*«Որ զանարար բազուկս քո ի խաչին
փարածեցեր, Քրիստոս Աստուած
ևս նշան յաղթութեան երուր մեզ,
սուրբ զկեանս մեր պահես»:*

(Շարական)

Այսօր Հայ Եկեղեցին կրոնախմբե հաջվերացի փոքր, որ Հայ Եկեղեցվո հինգերորդ և վերջին փաղավարն է: Հայ Եկեղեցվո շարականագիրը Քրիստոսը որպես անմեղ կներկայացնե մեզի, որ իր ձեռքերը փարածեց հաչի վրա որպես հաղթության նշան: Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, իր երկրավոր կյանքի ընթացքին այդ անարար ձեռքերով բժշկություններ կատարեց, հրաշքներ գործեց և երկնային օրհնությունը բաշխեց բոլոր անոնց, որոնք իր ձայնը մոփկ ըրին և իրեն հեփեսեցան: Քանզի Ան պարգամեց՝ ըսելով. «Ես եմ ճշմարտությունը, ճանապարհը և կյանքը»:

Ան երկինքեն դեպի երկիր բերավ բոլոր երկնային ճշմարտությունները, որպեսզի իրեն մոփկ ընողները, իրեն հեփեսողները հավաքան երկնային ճշմարտության: Ինք եղավ ճանապարհը՝ ճանապարհը հաչի, ճանապարհը ճշմարտություններու, ճանապարհը նեղություններու, սակայն այդ բոլորն հեփո՝ հանդիսանալու համար կյանքը հավիտենական, ու հաջվերացի փոքին առիթով մեր մարածումը կերթա այն պահուն, երբ, իրապես, հաչի փոքին, Ավագ Ուրբաթ օրը, Քրիստոս իր անարար բազուկները փարածեց հաչին վրա՝ իր աստվածային մեծությունով մեզ ամբողջապես իր ձեռքերուն մեջ պարփակելուն, որպեսզի առաջնորդվինք հավիտենականության և ճշմարտության ճանապարհեն:

Քրիստոս իր ձեռքերը փարածեց. անարար էին անոնք ինչպես իր սիրտն ու հոգին, սակայն անմեղը մեղավոր դարձած էր, որպեսզի մեր բոլորին մեղքերը, մեր բոլորին հանցանքները, մեր բոլորին սխալները իր ուսին վրա առած հաչով բարձրացներ դեպի Գողգոթա, և Գողգոթային խաչվելով հաչին վրա՝ որպես փրկագին իր արյունը փար մեզ ազատագրելու, մեզ փրկելու և մեզ անմեղ դարձնելու, որպեսզի կարողանանք իր պարգամին համաձայն ըլլալու ճշմարտությունը, ճանապարհը և հավիտենական կյանքը:

Հին արեն խաչը չարչարանքի և անարգանքի մեծագույն նշանն էր, մանավանդ Հրեաստանի և Հռոմեական կայսրության սահմաններուն մեջ, ուր չարագործները խաչին վրա խաչելով անարգանքի արտահայտությունը կցուցաբերեին այդ անձերու նկատմամբ: Ու Քրիստոս հրեա ժողովուրդի աչքի առաջ որպես մեղավոր, Քրիստոս որպես ոճրագործ խաչին վրա բարձրացվեցավ, սակայն զինք խաչողները չանդրա-

դարձան, թե այդ անարգանքի միջոցը, այդ չարչարանքի միջոցը պիտի դառնա հաղթության նշան և պիտի դառնա փրկության նշան:

Քրիստոս խաչող մարդկությունը ազատագրեց իր կյանքի մեղքերեն, ազատագրեց մարդկությունը դարավոր մեղքերեն և զանոնք առաջնորդեց այն ճանապարհին, որ ինք երկինքեն երկիր իջած էր՝ մարդկությունը կրկին Աստուծո առաջնորդելու համար: Աստված՝ Երկնավոր Հայրը, Իր օրենքները և Իր չափանիշները պիտի չվախեի մեզ՝ մարդկությանս համար, սակայն միջոցը և առիթը գտավ, որպեսզի Իր Միածին Որդին երկինքեն երկիր իջնե ու մեզի ստրվեցնե այն ճանապարհը, որմեն պետք է քալենք՝ հավիտենականության ճշմարտության հասնելու համար:

Քրիստոս երկնային փառքը երկիր բերավ, խաղաղությունը և հաճությունը մարդկանց հոգիներուն մեջ հաստատեց, սակայն այդ հաճությունը և խաղաղությունը հաստատվեցան բոլոր անոնց մեջ, որոնք ճանչցան Քրիստոսը, հեղինակեցան Քրիստոսի և եղան Աստուծո որդեգիրները: Անհայրը առանց իր ծնողքին պարկանելու չի կրնար անոր ժառանգորդը ըլլալ: Այդպես նաև մենք: Առանց Աստուծո որդեգիրները ըլլալու չենք կրնար ժառանգորդներ հանդիսանալ:

Քրիստոս եկավ մեզ առաջնորդելու դեպի Աստված, փրկելու մեզ մեր կյանքի մեղքերեն ու հանցանքներեն, որպեսզի ձերբազատված կարողանանք հասնիլ երկնային ճշմարտության: Խաչով Անիկա մեզի ստրվեցուց այն ճանապարհը, որ կառաջնորդե դեպի երկինք, ու Խաչը դարձուց փրկության խորհրդանիշ, Խաչը դարձուց հաղթության խորհրդանիշ, Խաչով հաղթելու կյանքի բոլոր դժվարությունները, կյանքի նեղությունները, Խաչով ապրելու մեր կյանքի ընթացքը, որ յուրաքանչյուրս այդ Խաչն ամենելով հեղինակեք Քրիստոսին:

Այդպես եղավ առաջին դարերու քրիստոնյաներու կյանքը՝ ըլլան անոնք առաջալսներ, ըլլան անոնք հայրապետներ թե սուրբեր, որոնք կամովին ու գիտակցաբար իրենց կյանքի փրկության խաչը, հաղթության խաչը կրելով առաջնորդվեցան այն ճանապարհով, որ մեզի համար բացած է Երկնավոր Հայրը: Ու հայ ժողովուրդի զավակները, մանավանդ 301 թվականեն հետո, գիտցան քալել այդ ճանապարհին, կրելով իրենց ուսին վրա այդ Խաչը, որ զիրենք պիտի առաջնորդե դեպի Երկնային Արքայություն, հասնելու համար երկնային ճշմարտության, դառնալու որդեգիրները և ժառանգորդները հանդիսանալու Երկնային Արքայության ու արժանի ըլլալու Աստուծո փեսայության:

Մեր պատմության ընթացքին բազում չարչարանքի ճանապարհներ, գողգոթաներ մեր աչքի առաջ եկան, սակայն հայը այդ խաչեն հետո, ինչպես Քրիստոս իր գերեզմանեն հետո, Հոր ճշմարտությունը հաստատեց: Մենք ևս որպես ժողովուրդ և մանավանդ որպես Եկեղեցի խաչեն հետո մեր գերեզմանեն դուրս ելանք՝ զայն թափուր պահելու համար, սակայն Հոր ճշմարտությունը հաստատելու, որ է՝ հարությունը: Խաչը սրբության խորհրդանիշն է, իսկ Բանը՝ անմահության ու հավիտենականության:

Քրիստոս եթե մեզի ստրվեցուց ճշմարտությունը իր պարզամտներու ընդմեջեն և ճանապարհը Գողգոթայի ընդմեջեն, գերեզմանեն անդին մեզի ստրվեցուց հարու-

թյան ճշմարտությունը, հավիտենականությունը: Ու այդպես ապրեցավ հայ ժողովուրդը, այդպես ապրեցավ Հայ Եկեղեցին, իր բազում դժվարություններու կողքին ամուր մնաց իր հավատքին մեջ, ամուր մնաց հեղինակու Քրիստոսի ճանապարհին ու հասավ մանավանդ այսօրվա իրականության, այսօրվա ճշմարտության, դառնալով ժողովուրդ մը և երկիր մը, պետություն մը և, մանավանդ, Եկեղեցի մը ազապ և անկախ հայրենի հողին վրա:

Ճիշդ է, որ մեր պատմական հողերեն մեկ մասնիկն է, որուն վրա մեր անկախ հանրապետությունը հաստատված է, սակայն այդ փոքրիկ հողամասին վրա անգամ մեր ազապության, մեր հոգևոր-մշակութային աշխարհները, գործունեությունը առաջ կկարողանանք փանիլ, ու մանավանդ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը անցնող այս փասը փարիսների ընթացքին՝ և հարկապես վերջին երկու փարիսների ընթացքին, գահակալությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ոչ միայն շինարարական, այլև հոգիներու շինարարության աշխարհներով առաջ կընթանա, որպեսզի հասնի մեր ժողովուրդի հոգևոր կարիքներուն, ազգային կարիքներուն, բարոյական նկարագրի կերպման: Այս եղած է առաքելությունը քրիստոնեության, այս եղած է առաքելությունը ամբողջ դարերու փրկության, ու այս պահուն մեր աղոթքը կառաքենք առ Բարձրյալն Աստված, որպեսզի Երկնավոր Հայրը Իր հովանին և Իր պահապան ձեռքը միշտ փարածն մեր ժողովուրդին վրա, մեր Եկեղեցիին վրա, մեր հայրենի հողին վրա, որպեսզի կարողանանք շարունակել հավատքի, ճշմարտության ու հավիտենականության մեր երթը:

Այսօր, սիրելի՛ հարազատներ, մենք ծանր պարտականություն մը ունինք հիշափակելու այն փխտը դեպքերը, որոնք փռելի ունեցան այս շաբթվա ընթացքին: Տխուր պատահարներ էին, որոնք փռելի ունեցան Ամերիկայի Միացյալ Նահանգներու մեջ: Հարվածը, անշուշտ, ծանր է, սակայն այդ ծանրությունը ոչ միայն Ամերիկայի Միացյալ Նահանգներուն է, այլ նաև համայն մարդկությանը: Այդ ցնցումը Ամերիկայեն մինչև աշխարհի ծագերը կերթա և կմտաբեռնե յուրաքանչյուր անձ, որովհետև եթե այսօր Ամերիկայի մեջ պատահեցավ, կրնա նաև պատահիլ ունէ այլ երկրին մեջ:

Եվ այդ հասկացողությամբ մենք ցնցված ենք փռելի ունեցած պատահարներեն և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ մեր խոր ցավակցությունը կհայտնենք Ամերիկայի Միացյալ Նահանգներու նախագահին, Պետական Ավագանիին և ժողովուրդին ու մանավանդ անոնց, որոնք սիրելի հարազատներ կորսնցուցին: Հա՛նում Ամենայն Հայոց Կաթողիկոսին խոնարհաբար կմոտենանք Հայաստանում Նորին Գերագանցություն Ամերիկայի Միացյալ Նահանգներու դեսպանին՝ պրն Լեմբինին, խնդրելով, որ մեր բոլորի և հարկապես Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցությունը և վիշտը հայրենի համայն Ամերիկայի ժողովուրդին և մանավանդ անոնց, որոնք կորսնցուցին իրենց հարազատները. ամեն: